**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

# Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «2» մայիսի 2024 թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն № 138-Ա/Ք

### ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի ապրիլի 17-ի N 549-Ա/2 հրամանը՝ գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթը պատշաճ կազմակերպելու նպատակով՝

## Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝ ապահովել մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝

1) ապահովել մրցույթի հայտերի առցանց համակարգով ընդունումը,

2) կազմակերպել մրցույթի հայտերը գնահատող մրցութային հանձնաժողովի աշխատանքը:

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչությանը (պետ՝ Լուսինե Գրիգորյան)՝

1) իրականացնել մրցույթի հայտատուների համար խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի թղթային տարբերակների ընդունումը:

4. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բյուջետավորման և գնումների բաժնին (պետ՝ Սերգեյ Սանթրոսյան)՝ կազմակերպել գիտական սարքերի/սարքավորումների գնման գործընթացը:

5. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ ապահովել մրցույթի արդյունքներով գնման ենթակա գիտական սարքերի/սարքավորումների գնման համար ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

**ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ**